

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Ք Ի Ր

Ամեն օր կիրառարակուի : — Հասը 10 փարայ է : — Պօլիս բաժանարդ ըլլալ ուզողը մէկ արժամ Մէճիա պիտի վճարէ 100 թուղ համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 100 թուղ համար, թղթաւարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման ստոր 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից Նոր Գրատունը :

Երէկոսան Ընդհանուր Ժողով

Ժամը 7ն անցած էր, երբ 42 հոգի՝ իրրեւ երեսփոխան՝ Ժողովեցան Ղալաթիոյ եկեղեցին, ընդ նախադահլւթեամբ ամեն . Ս. Պատրիարք Հօր :

Եկեղեցւոյն անձկութեան պատճառաւ՝ որ չէր կրնար տանիլ ունկրնդ իր Ժողովրդեան բարձրութեանը, — հարկ եղաւ երեսփոխանաց ամթոռներուն շրջանակը սեղմել, և Ս. Պատրիարքը զուերճարանեց թէ Ժողովուրդը այսպէս բարձրովն մէկ մէկու կեանքունէ զիս և երեսփոխանութիւնը :

Ստեանը չբացուած՝ Ս. Հայրիկը համառօտ ասենախօսութեամբ մը ծանոյց դադարեալ Սահմանադրութեան գործադրութեան համար Բ. Դրան բրած հրամանը, սակայն խրնդրեց որ՝ աւելի սղւաթն քան թէ գրայն ուշադրութիւն ըլլայ, քանի որ վերաքննեմ թեան բովի մէջ է, և քանի որ ազգային մանաւանդ դաւառաւական վիճակը չներէր ժաւախածաւթիւն ընելու : Յետոյ, Նորին բարձր Սրբաշնութեան առաջարկու

թեամբ, Աղարեգեան Սարգիս էֆէնտին գարձեալ առժամանակեայ ատենապետ ընարուեցաւ, և ատենը բացուեցաւ : Կէս ժամու չափ վէճ եղաւ նախորդ նախին ատենադրութիւնը կարգացուելու կամ չկարգացուելու համար, և վերջապէս որոշուեցաւ որ թէ՛ նախորդ և թէ՛ նախկին նիստերուն չկարգացուած ատենադրութիւնները կարգացուին յաջորդ նախին մէջ : Այս որոշման դալու համար աւելի ժամանակ պիտի անցունէին մեր երեսփոխանները, եթէ Ս. Հայրը երաշխաւոր չըլլար ատենադրութեանց ներկայացման համար :

Մանիլագէս Բ. Դրան հրամանագիրը կարգացուեցաւ, որով Ս. Հօր սրտաւիրուած էր՝ Ընդհանուր Ժողովով քառ Սահմանադրութեան ընարել քաղաքական ու կրօնական Ժողովները, և սրդխնք Բ. Դրան հայտը ել վաւերացման համար : Պատենապետ էֆէնտին առաջարկեց Ս. Պատրիարք Հօր համար Նորհալպութեան քուէ սալ Բ. Դրան այսպիսի հրամանագիր մը հանելու յաջողելուն համար . ուրիշ մը Օսեան

էֆէնաին ալ շնորհակալութեան ար-
ժանի ցուցուց . ուրիշներն բոլոր
խառն ժողովը յիշեցուցին . իսկ Ս.
Պատրիարքը շնորհակալութեան քը-
ուէի արժանի համարեցաւ յամանա-
կը , և հետեւաբար առաջարկեալ
քուէն արուեցաւ յամանակին , Ս.
Պատրիարք Հօր և խառն ժողովոյ
ամբողջութեան համար : — Արդարեւ
ժամանակն ալ կողմէ այսպիսի յա-
ջողութեանց համար , զոր Նորին բար-
ձրը Սրբազնութիւնը խորհրդաւոր
կերպով ուզեց յիշեցունել :

Երեսփոխաններն երբ կոկսէին
խօսք ուզել , Օսեան էֆէնաին՝ որ
ներկայ էր , ինդրեց ամենէն յառաջ
իրեն ապ խօսքը ոչ իբրև Երեսփո-
խանի այլ իբրև խառն ժողովոյ քու-
թեան : Կարգաց համառօտ բայց
խմատուն դիր մը , ուզեալ առ Ե-
րեսփոխանութիւն : Էֆէնաին ասով
կծանուցանէր Սահմանադրութեան
վերադարձը , ժողովրդական աննպա-
տակ յուզմանց չարիքը , և ամեն .
Ս. Պատրիարք Հօր վրայ հասարա-
կաց կատարեալ վատահոթեան ան-
հրաժեշտ պէտքը կղզացունէր , այս
ասով իսկ յիշատակելով Նորին
բարձր Սրբազնութեան ընտիր ընտիր
յատկութիւնները : Էֆէնաին երես-
փոխանական ասեանէն և ունկնդրաց
ստուար բազմութեան մէջէն սահե-
ցաւ գնաց , իւր գիրը վերջացունե-
լով թէ արժանաւոր գործակիցներ
պէտք է մատուցանել Նորին բարձր
Սրբազնութեան , և թէ այսուհետև
չկայ խառն ժողով , սարիի մը չտի
ժամանակ ազգային վախճորիկներու
դէմ անվերհէր միջեղէն և Պատրիար-
քական թախուր դատչոյից վրայ Հայ-

րիկի պէս Հատարակաց սիրելի կըն-
րական մը բարձրացունելէն յետոյ :

Գոհունակութեան ձայներ ամեն
կողմանէ լուուեցան , և ամեն մարդ
պահ մը Օսեան էֆէնաին հետքը
կնշմարէին ակնկառոյց :

Այնուհետև , Քաղաքական ու
Կրօնական ժողովոց ընտրութեան
ինդիր մէջ սերուեցաւ : Վիճարա-
նութիւնն սկսաւ :

Մէկը դիտողութիւն կրնէր թէ սահ-
մանադրութեան արանապարտութեան
համեմատ պէտք է երեսփոխանու-
թիւնը ամբողջացունել , այսինքն վի-
ճակաւ ելնելիք երեսփոխանները ու
րոշել ու անոնց ինչպէս նաև վախճա-
նելոց տեղ ուրիշներն ընտրել տալ ,
և յետոյ Քաղաքական ու Կրօնական
ժողովոց ընտրութիւնն ընել իբրև ե-
րեսփոխանական ժողով : Խօսճասարեան
Օրակն էֆէնաին էր այս դիտողու-
թիւնն ընտր , որ վատտիւք կը խօսեց
և կարգարացունէր իւր դիտողու-
թիւնը . իսկ Գրասէրեան Գարբիէլ է-
ֆէնաին զարմանք , զարմանք և դար-
ձեալ զարմանք կյայանէր այս դիտ-
ողութեան վրայ , և միանգամայն յաւ-
կցուցնէր որ չէ թէ ժողովրդեան այլ
երեսփոխանի մը բնութիւն կրնայ այսպիսի
խօսքեր . — Շնորհակալել ըսել է , կը-
նազարանէր , Ս. Հայրիկին սիրօք ,
ձեռքը , ոտքը , գլխին սրբազնութիւ-
նը անգործութեան դատապարտել
լսել է , կրնէր , և իբր այն թէ կիտատա-
բանէր թէ երեսփոխանութիւնը ամ-
բողջացունելու համար 73 զուրուշ
սուրքը տալու է ժողովորդը և ուրիշ
այսպիսի դատապարտութիւններ ըլլալու
են . Գրասէրեան էֆէնաին նաև ցա-

եր կթափթփէր խօծասարեան էֆէնտինին վրայ, որ պատրիարքական ընտրութեան մասնակցելէն յետոյ այսպիսի գիտողութիւններ հիմայ ժողովոց ընտրութեան ատեն կրնէ: Յաւոյ ու զարմանաց այս անխնանակի յայտարարութիւնները վերջանալէն յետոյ, խօսքը Ստեփան պէյ, ու Սէրվիչէն էֆէնտինն առին հետոյհետէ, և՛ եթէ աղէկ հասկցած եմք՝ շանացին հաստատել թէ ազգին վիճակը չներէր ժամավաճառութիւն ընել, և՛ թէ՛ քանի որ սահմանադրութիւնը վերաքննութեան ենթարկուած ու աւարտումն մօտեցած է, ժողովոց ընտրութիւնն ընելու և ապա անմիջապէս վերաքննութեան գործը ձեռք առնելու է: Սէրվիչէն էֆէնտինն աւելի երկարօրէն խօսեցաւ, անցեալ գէպքեր խառնեց իւր ատենախօսութեան մէջ, և ճարտարութեամբ յորդոր կարգաց որ ազգին ժողովն համար խնդրոյն երեսը չնայուի այլ խորը թափանցուի, և երեսփոխանութեան ամբողջութեան գործով զբաղելու տեղ՝ սահմանադրութեան վերաքննութեան գործը շուտով ի գլուխ տանելու ջանքեր ըլլան: Այն ատենախօսութենէն յետոյ, որ հանձնողներ ունեցաւ, Սէրվիչէն էֆէնտինն ձգեց ատեանն ու բազմութիւնը ճեղքելով՝ աներևութացաւ:

Ումէտ էֆէնտին Պէհզում քուէի գնել առաջարկեց, սակայն ծանուցուեցաւ որ խնդիրը գեռ խակ է: Մեկքանի լուսկայ երեսփոխաններ ալ ձանձրութիւն յայտնեցին վիճարանութեան երկարութեան վրայ, սակայն Ս. Նախագահին ազդարարութեամբը վիճարանութիւնը շարու-

նակուեցաւ: խօծասարեան էֆէնտինն Գրասերեան էֆէնտինն զարմանքներն ու ցաւերը փարատելու ելաւ. — «Սահմանադրութիւնը հիմա ունինք, ըսաւ, ուստի կարելի եղածին չափ օրինաւոր երեսփոխանութիւնն մ'ալ ունենալու ենք. 78 զրը ընտրող ժողովրդեան համար տուգանք չէ: Ազգը երբ պէտք ունենայ՝ կրնայ ուզուիլ նոյն գումարը և ժողովուրդը կուտայ. երեսփոխանութիւնը ամբողջացունելու համար շատ ժամանակի պէտք չկայ. Ս. Հայրը իրեն գործակից առժ. ժողով մը կրնարէ ու կ'ործէ. այս ժողովը այս վիճակին մէջ չկրնար ազգին համար ժողով ընտրել. ազգային ընդհանուր հաւանութեամբ ընտրուած Ս. Պատրիարքին ընտրելը աւելի հաճոյ և ընդունելի է »:

Խօծասարեան էֆէնտինն ո՛չ այսչափ այլ աւելի խօսեցաւ, և ժողովրդեան իրաւանց պաշտպան հանդիսացաւ ամենայն զօրութեամբ: Այս միջոցին, պատգամաւորութիւն մը՝ ժողովրդեան կողմանէ՛ յայտարարութիւն քրաւ՝ խնդիրը խօծասարեան էֆէնտինին գիտողութեանց համեմատ կարգադրել, պատգամաւորութեան ձայնը խեղդել ու զոյններ ու լռեցունելու փորձ փորձողներ եղան, բայց Ս. Պատրիարքը վստահութեան հրաւիրեց զժողովուրդը, և երեսփոխանք դարձեալ սկսան բանակուց: Ժամը 10ին մօտեցաւ, և վերջապէս որոշուեցաւ որ Կրօնական ու Քաղաքական առժ. ժողովներ ընտրուին, վեցական անդամներէ բաղկացեալ: Չորս հոգիէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմուեցաւ:

որոնք Ս. Պատրիարք Հօր հետ խորհրդակցելով Գաղաքական Ժողովոյ համար 12 հոդի ցանկ մը պիտի պատասխանեն, և այս ցանկը՝ ինչպէս նաև կրօնական Համագումար Ժողովոյ կողմանէ կրօնական Ժողովոյ համար պատրաստուելիք ընտրելեաց ցանկը՝ նստակաւ երեսփոխանաց պիտի հաղորդուի ու քուէ պիտի ուզուի, և արդիւնքը քննիչ մասնաժողովոյ մը միջոցաւ առնուելով՝ Բ. Գրան պիտի ժանուցուի:

Ասկէց զատ, որոշուեցաւ որ, Ս. Պատրիարք չայլը խորհրդակցելով ընդհանուր Ժողովոյ դիւանին հետ՝ դարձեալ Ժողով հրահրէ, որպէս զի խնդիր ու խորհրդակցութիւն ըլլայ թէ՛ ազհանադրութեան վերաբրնութեան գործը ներկայ երեսփոխանութիւնը պիտի կատարէ, թէ՛ այս երեսփոխանութիւնը ազգին երանաց համեմատ ամբողջանալէն յետոյ պիտի սկսուի:

Իբրև ժանութիւն կաւելցունելով թէ՛ մեր այս երեսփոխանները Գաղաքական ու կրօնական Ժողովոյ անդամները վրջի իջուցին՝ նկատողութեան առնելով թէ՛ փորձը հաստատած է Ժողովոյ բաղնանդամութեան պատճառաւ ասկէց յառաջ աւելի ունեցած ազգայնաս դժուարութիւնները:


Իսկ մեր կողմանէ այս անգամ դիտողութիւն արեցունելու պէտք չեմք տեսներ, որովհետև մեր նկարագրութեան ոճը ակներև կցուցիւնէ այս ինքրոյն նկատմամբ մեր ունեցած գաղտնիարը, և արդէն առանձին իսկ բաւական յայտնած եմք քանի մը նախորդ յօդուածներով:

ասկայն չեմք կրնար մեր զարմանքը բռնել երբ կտեսնենք որ երեսփոխանութեան ամբողջութեան առաջարկութեան վրայ զարմացող, նոյն առաջարկութեան դէմ մաքառող և իրենց ակտներուն վրայէն ելնել չուզող ու չկարծող՝ սնուամբ միայն երեսփոխաններու ձեռք մատնուած եմք հիմն ալ, և ազգին ձայնը լսել չեն ուզեր, «Գուք չգիտէք՝ հետաւես չէք՝ Ժամանակ կանցնի՝ ազգին օգուտը այսպէս կպահանջէ», եւն. ըսելով. . . :

Ահա Ժողովողացին վեհապետութիւն մը, որ անունը կայ ինք չկայ: Տեսնենք թէ երեսփոխան ըսուած այս քանի մը անձանց յաջորդ նիւտը ինչ պիտի ծնանի: Պիտի որոշեն երեսփոխանութեան ամբողջանալը, թէ՛ առկաին ամուր բռնած պիտի կայնին, և պատճառ պիտի ըլլան ազգին մէջ նոր հատոցման խաղաղութիւնը վեր ի վայր ընելու:

Գաղաքական Ժողովոյ ընտրելեաց ցանկը պատրաստելու համար կալմուած մասնաժողովին անդամք են՝ Մանուկեան Մանուկ, Սաղայեան Ալեկսան, Խլթիւճեան Կարապետ և Խօժոսարեան Օդոնէն էֆէնտիները:

Իսկ քուէհամարի մասնաժողովը կազմուած է Սէֆերեան Սիմոն ու Վարժապետեան Ներսէս Արքաղաններէն և երկու աշխարհական անդամներէ:



ՏՆՕՒՆ ԵՐ ՏԻՐ
Հ. Ս. ԱԼԵՃԱՅԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԲԻՐՔՅԵՍԵՆ